ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սիսիան **01/12/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Ավագ Ասատրյանը, Աննա Ավետիսյանը, Մարինե Գրիգորյանը, Հայկ Հակոբյանը, Անի Հարությունյանը, Կարեն Հովհաննիսյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Գարիկ Հակոբյանը, Արմինե Հարությունյանը, Անի Սահակյանը, Դավիթ Հարությունյանը, Դավիթ Այվազյանը, Երվանդ Եղիազարյանը, Կորյուն Մուրադյանը, Վարդան Խաչատրյանը, Նարեկ Հովսեփյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Հակոբջանյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Կարեն Իվանյանը

Ավագանու նիստն իրավազոր էր և հայտարարվեց նիստը բացված:

Նիստը ուղիղ հեռարձակվում էր:

Նախքան նիստի օրակարգի հաստատելը համայնքի ղեկավար Ա. Հակոբջանյանն առաջարկեց օրակարգում ավելացնել ևս մեկ հարց «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց և անժամկետ օգտագործման հանձնելու մասին»:

Դրվեց քվեարկության

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Ավագանու անդամ Տիգրան Համբարձումյանը լքեց դահլիճը:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի հերթական նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման երրորդ եռամսյակի ընթացքի մասին:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի թիվ 21-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման հանձնելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2024 թվականին բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտեր ներկայացնելուն համաձայնություն տալու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող արոտներից և գյուղատնտեսական այլ նշանակության հողերից 0.32756հա հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով /սերվիտուտ/ օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրում գտնվող արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական տարածքներ նպատակային նշանակության հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան քաղաքի Ռ. Իսրայելյան փողոց 39/65 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:
8. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Աշոտավան բնակավայրի 2-րդ փողոց 29/3 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:
9. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասն անհատույց և անժամկետ օգտագործման հանձնելու մասին:
10. Տարածք հատկացնելու մասին:
11. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 24-ի թիվ 46-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
12. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին:
13. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց և անժամկետ օգտագործման հանձնելու մասին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75-Ա/

Ջիվան Մարգարյանը տեղեկացրեց, որ մի խումբ բնակիչներից դիմում-բողոք է ստացել և առաջարկեց ներառել օրակարգ:

Ա. Հակոբջանյանը դիմումը ընթերցեց և տեղեկացրեց, որ դիմումը ստացել են, գործին քաջ ծանոթ են, դա օրակարգ ներառելու հարց չէ:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով.

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ղեկավար Ա.Հակոբջանյանի հաղորդումը Սիսիան համայնքի բյուջեի 2023 թվականի երրորդ եռամսյակի ընթացքի մասին՝ համաձայն բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության 1-5 հատվածների:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դավիթ Այվազյանը մանրամասը ներկայացրեց եկամուտներն ու ծախսերը: Երկար քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Քվեարկությանը չմասնակցեցին ավագանու անդամներ Ջիվան Մարգարյանը, Դավիթ Դավթյանը և Գևորգ Դավթյանը:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 76-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ԹԻՎ 21-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 83-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 21-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «եկամուտների գծով՝ 2191414.8 հազար դրամ» բառերը փոխարինել «եկամուտների գծով՝ 2433478.1 հազար դրամ» բառերով:
2. Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «ծախսերի գծով՝ 2993239.3 հազար դրամ» բառերը փոխարինել «ծախսերի գծով՝ 3235302.6 հազար դրամ» բառերով:
3. Որոշման 3-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն 1, 2 և 3 հավելվածների:

Ֆինանսատնտեսական բաժնի պետ Դավիթ Այվազյանը հիմնավորեց բյուջեում նախատեսվող փոփոխություններն ու լրացումները, նշելով, որ որոշման նախագծի ընդունումից հետո համայնքի բյուջեի երկամուտներն ու ծախսերը կավելանա 242063288.3 ՀՀ դրամով:
Աշոտ Աղաջանյանը հարցրեց, թե խմելու ջրի քլորացումը ո՞ր բնակավայրերում է լինելու:
Դավիթ Այվազյանը պատասխանեց. Շենաթաղ, Բալաք և Շաղաթ բնակավայրերում:
Հարցը դրվեց քվերակության:

Կողմ-11 Դեմ-2 Ձեռնպահ-0

Քվեարկությանը չմասնակցեց ավագանու անդամ Գևորգ Դավթյանը:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 77-Ն/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԴԱՎԻԹ ԱՅՎԱԶՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ, 688-րդ, 689-րդ, 692-րդ, 693-րդ և 694-րդ հոդվածներով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման հանձնել «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ համաձայն հավելված 1-ի:
2. Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման հանձնել «Սիսիանի բնակարանային կոմունալ տնտեսություն» ՀՈԱԿ-ին՝ համայնքում առաջացած խնդիրների կատարման և աղբահանություն իրականացնելու նպատակով՝ համաձայն հավելված 2-ի և 3-ի:
3. Սիսիան համայնքի կողմից ձեռքբերված համայնքային սեփականություն հանդիսացող թվով 20 /քսան/ հատ սեղանները անհատույց օգտագործման հանձնել «Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ին՝ համաձայն հավելված 4-ի:
4. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Դ. Այվազյանը զեկուցեց, որ նախորդ նիստում նշված գույքերը ներառվել են գույքացանկ և համայնքային սեփականության գույքը արդյունավետ կառավարելու, պահպանելու և օգտակար ծառայեցնելու համար անհրաժեշտ է անհատույց օգտագործման հանձնել կազմակերպություններին:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Քվեարկությանը չմասնակցեցին ավագանու անդամներ Աշոտ Աղաջանյանը և Ջիվան Մարգարյանը:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 78-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2024 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ԵՐՎԱՆԴ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N1708-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

1. Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով Սիսիան համայնքի 2024 թվականի բյուջետային ֆինանսավորման ներկայացվող հետևյալ ծրագրային հայտերին՝
   1) Սիսիան համայնքի «Ա. Մինասյանի անվան արվեստի և ստեղծագործության կենտրոն» ՀՈԱԿ-ի վարչական շենքի կապիտալ վերանորոգում.
   2) Սիսիան քաղաքի Նար-Դոս, Նար-Դոս - Գ. Նժդեհ ճանապարհահատվածի, Խանջյանի 1ա, 3ա, 1, 3, 5, 7, Հ. Ազոյան 2, 2ա, 4, 6, 8, 10, Որոտան 2ա, 4ա, 4բ, 1, 3, 5, 7, 2, 4, 6, 8, Շիրվանզադե 2ա, Իսրայել Օրի 5, 7, 9 բազմաբնակարան բնակելի շենքերի փողոցների հիմնանորոգում:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Բուռն քննարկումից հետո Ա. Հակոբջանյանը հաղորդեց, որ խոստացել ենք մինչև 2026թ. բոլոր փողոցները պետք է ասֆալտապատված լինեն:
Ն. Յազուլյանը հարցրեց արդյո՞ք Որոտանի շենքերի տանիքները բոլորը վերանորոգվել են, հատկապես Որոտանի 8 շենքը ներառված է, թե՝ ոչ:
Ե. Եզիազարյանը պատասխանեց այո, նշված շենքը ներառված է:

Հարցը դրվեց քվեարկության:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 79-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐՈՏՆԵՐԻՑ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՅԼ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻՑ 0.32756ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ /ՍԵՐՎԻՏՈՒՏ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 50-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշումը և 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման 46.2. կետի դ) ենթակետն ու հաշվի առնելով «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի 2023 թվականի հուլիսի 31-ի դիմումը և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Տալ համաձայնություն Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող, պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից 0.32756հա /վկ.08112023-09-0038/, արոտներից և գյուղատնտեսական նշանակության այլ հողերից սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտ) 25 /քսանհինգ/ տարի ժամկետով «ՀԳՆՔ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը տրամադրելուն և սահմանել սահմանափակ օգտվելու իրավունք /սերվիտուտ/, մեկ հեկտարը 20000 /քսան հազար/ ՀՀ դրամ տարեկան վարձավճարով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վ. Խաչատրյանը ներկայացրեց, որ Գորայք բնակավայրի վարչական տարածքում է գտնվում, 2 հողակտոր է: Հիդրոէլեկտրակայանի վերազինման և վերակառուցման հետ կապված անհրաժեշտ է սերվիտուտի պայմանագիր կնքել 20000 ՀՀ դրամ տարեկան վարձավճարով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 80-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԵՅՆԱՄԻՆ ԹԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական և համայնքների սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» N286 որոշման կարգը, Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից 2022 թվականի մայիսի 6-ին տրված «Օգտակար հանածոների արդյունահանման» թիվ ՇԱԹ-29/676 թույլտվությունը և լեռնահատկացման NL 676 ակտն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը և «ԱՐԵՆԱ-3» ՍՊԸ-ի 06 հունիսի 2022 թվականի դիմումը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շաքի բնակավայրի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր կատեգորիայի՝ 1.98837հա հողամասը (վկ. 29112023-09-0069) առանց մրցույթի կառուցապատման իրավունքով տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման թույլատվություն ունեցող իրավաբանական անձ՝ «ԱՐԵՆԱ-3» ՍՊԸ-ին՝ ընդերքօգտագործման նպատակով, 18 տարի 6 ամիս ժամկետով, տարեկան 1հա 200000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ արժեքով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Քաղաքաշինության բաժնի պետի ժ/պ Վ. Խաչատրյանը ներկայացրեց, որ համայնքում չկան գործող ավազակոպճագլաքարի հանքեր և պահանջարկ ունենք, դրա համար անհրաժեշտություն է առաջացել հողամասը տրամադրել «ԱՐԵՆԱ-3» ՍՊԸ-ին, որը նաև կիրականացնի սոցիալական աջակցության ծրագրեր:

Երկար քննարկումից հետո որոշեցին հարցը հետաձգել և ներառել հաջորդ նիստին:

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ Ռ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՓՈՂՈՑ 39/65 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48[1]-րդ, 57-րդ, 60-րդ, 76-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման պահանջները և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող, Սիսիան քաղաքի Ռ. Իսրայելյան փողոց 39/65 հասցեում գտնվող 0,0006 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «ընդհանուր օգտագործման հողեր» գործառնական նշանակության հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 09-006-0562-0002, վկ. 05122023-09-0030/ առանց մրցույթի, 4 /չորս/ տարի ժամկետով, 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ տարեկան վճարով օգտագործման տրամադրել կառուցապատման իրավունքով՝ ոչ հիմնական շինություն՝ տաղավար տեղադրելու նպատակով:
2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 81-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՏԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑ 29/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՋԵԿ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 46-րդ, 48[1]-րդ, 57-րդ, 60-րդ, 76-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշման պահանջները և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող, Աշոտավան բնակավայրի 2-րդ փողոց 29/3 հասցեում գտնվող 0,002 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության «ընդհանուր օգտագործման հողեր» գործառնական նշանակության հողամասը /կադաստրային ծածկագիր՝ 09-015-0516-0004, վկ.05122023-09-0001/ առանց մրցույթի, 20 /քսան/ տարի ժամկետով, 1քմ 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ տարեկան վճարով օգտագործման տրամադրել կառուցապատման իրավունքով, ոչ հիմնական շինություն՝ տաղավար տեղադրելու նպատակով:
2. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող գործառույթները օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ, 688-րդ, 689-րդ, 692-րդ, 693-րդ և 694-րդ հոդվածներով ու նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Գ. Խաչատրյանի 2023 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 10.4/26909-23 գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի Շաքի բնակավայրում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողերից 0.05հա /ծածկագիր՝ 09-070-0134-0018, վկ. 08122023-09-0001/ հողամասն անհատույց և անժամկետ տրամադրել Հայաստանի Հանրապետությանը:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Վ. Խաչատրյանը զեկուցեց, որ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարը գրությունով դիմել է մեզ Սիսիան համայնքի Շաքի բնակավայրի 0.05հա հողամասը անհատույց և անժամկետ տրամադրել, ՀՀ ընդհանուր օգտագործման Մ-2 միջպետական ավտոմոբիլային ճանապարհով անցնող բեռնափոխադրում իրականացնող ծանրաքարշ և մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների անշարժ կշռման հենակետ տեղադրելու նպատակով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83-Ա/

Լսեցին

ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 606-րդ հոդվածով, 608-րդ հոդվածի 1-ին, 616-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով ու 617-րդ հոդվածով և նկատի ունենալով քաղաքացի Հովիկ Հովսեփյանի դիմումն ու համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող Սիսիան քաղաքի Սիսական փողոց, թիվ 44ա հասցեում գտնվող «Համո Սահյանի անվան Սիսիանի քաղաքային մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքից 24քմ տարածքը (համաձայն հատակագծի), 1 տարի ժամկետով, վարձակալական հիմունքներով տրամադրել քաղաքացի Հովիկ Գրիշայի Հովսեփյանին՝ դհոլահարների պարապմունք կազմակերպելու համար և ամսական վարձավճար սահմանել 10000 /տասը հազար/ ՀՀ դրամ:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 24-Ի ԹԻՎ 46-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԱՐՄԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 24-ի «Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի մրցութային հանձնաժողով ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 46-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի մրցութային հանձնաժողով և հաստատել անհատական կազմը.

1) Կ. Հովհաննիսյան - համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ, աճուրդավար,
2) Ա. Խաչատրյան - աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
3) Կ. Մուրադյան - աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
4) Դ. Այվազյան - աշխատակազմի ֆինանսատնտեսական բաժնի պետ, հանձնաժողովի անդամ,
5) Լ. Գալստյան - աշխատակազմի քաղաքաշինության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ, արձանագրող,
6) Ս. Մնացականյան - աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,
7) Հ. Քարամյան – աշխատակազմի քաղաքաշինության բաժնի առաջատար մասնագետ, հանձնաժողովի անդամ,
8) Ս. Սահակյան – աշխատակազմի առաջատար մասնագետ /իրավաբան/, հանձնաժողովի անդամ,
9) Ա. Միրզախանյան - համայնքի ավագանու անդամ, հանձնաժողովի անդամ»:

2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՐԿՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ԿԱՐԵՆ ԻՎԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի ավագանու երկրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2023 թվականի դեկտեմբերի 26-ին, ժամը 16:00-ին:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԵՎ ԱՆԺԱՄԿԵՏ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 685-րդ, 688-րդ հոդվածի 1-ին մասով, 689-րդ, 692-րդ, 693-րդ և 694-րդ հոդվածներով, հաշվի առնելով Սյունիքի գազիֆիկացման և գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Վ. Հակոբյանի գրությունն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ համաձայն հավելվածի, անհատույց և անժամկետ օգտագործման հանձնել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Սյունիքի ԳԳՄ-ին՝ հետագա անխափան շահագործման նպատակով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Վ. Խաչատրյանը ներկայացրեց, որ Աղիտու բնակավայրի գազամատակարարման ցանցի շահագործման համար է: Վերջին շրջանում վթարներ շատ են եղել և խնդրել են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ին վերանորոգման համար, այդ իսկ պատճառով նպատակահարմար են գտնում անժամկետ և անհատույց հանձնել ՓԲԸ-ին հետագա անխափան շահագործման համար:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87-Ա/

Ավագանու անդամներ

ԱՇՈՏ ԱՂԱՋԱՆՅԱՆ

ՀՈՎՍԵՓ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՐԱՉՅԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԴԱՎԹՅԱՆ

ԴԱՎԻԹ ԴԱՎԹՅԱՆ

ԲԵԼԼԱ ԹԱՄՐԱԶՈՎԱ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՋԻՎԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՄԵՆԱԿ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՆԱԽՇՈՒՆ ՅԱԶՈՒԼՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՍՈՒՐԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Կարեն Իվանյանը _____